Դրամաշնորհային հիմնադրամի հայեկարգային դրույթներ

Ներածություն և ընդհանուր դրույթներ

Շվեյցարիայի զարգացման գործակալությունը և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարությունը Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելուն աջակցելու նպատակով կայացրել է դրամաշնորհային հիմնադրամ: Ծրագրի համակարգումը ստանձնում է ԳՄՀԸ կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը՝ ՀՀ ՏԿԵՆ հետ համատեղ:

Հիմնադրամի գումարները նախատեսված են ՀՀ խոշորացված համայնքներում տնտեսական զարգացմանն ուղղված փոքր և միջին ծրագրերին աջակցելուն:

Մրցույթին կարող են մասնակցել համայնքները և/կամ հանրային-մասնավոր միավորումները[1]՝ ակնկալելով 5.000-ից 15.000-20.000 եվրոյի, բացառիկ դեպքերում՝ մինչև 50.000 եվրոյի ծավալով (միջհամայնքային ծրագրային առաջարկների դեպքում) ծրագրային հայտեր «ԳՄՀԸ ուղղակի սուբսիդիա համայնքին» ԳՄՀԸ գործիքի միջոցով[2]:

Հիմնադրամը պետք է նպաստի սոցիալ-տնտեսական և այլ ենթակառուցվածքների գործադրելիությանը, որոնք կընդլայնեն շուկայի հասանելիությունը տեղական բիզնեսների համար՝ ՀՏՁ ոլորտում ոչ-պետական կառույցների հետ համագործակցության պայմաններում: Դիմորդը պետք է համոզիչ կերպով ցուցադրի, թե ինչպես է իր ծրագիրը նպաստ բերում համայնքում դրական տնտեսական արդյունքներին (կապեր այլ տնտեսվարողների հետ, զբաղվածություն և այլն):

Իր սուբսիդիար դերում և հիմնադրամի միջոցների բավարար լինելու պայմաններում՝ այն կխթանի և կաջակցի ՀՏՁ նախաձեռնություններին, որոնց նպատակն է արտադրանքի և ծառայությունների ձևավորմանը և դրա ծավալի ընդլայնմանը, ինչպես նաև զբաղվածության աճին նպաստելը:

Շուկայի հնարավոր աղավաղումներից խուսափելու և համայնքային մակարդակում անազնիվ մրցակցությունը բացառելու նկատառումով, ներկայացված ծրագրերում հիմնադրամի ներդրումը սահմանափակվում է առավելագույնը 80%-ի չափով ծրագրերում:

Ոլորտների սահմանափակում չկա: Կարևորը բիզնես-համայնք-ՏԻՄ համագործակցության սխեմաների և համայնքի տնտեսական զարգացման մակարդակի բարելավման վրա հիմնավորված և չափելի ազդեցությունն է (համագործակցության սխեմաներ, շահառուների թիվ, աշխատատեղ, տնային տնտեսությունների եկամուտի աճ, ձեռներեցության մթնոլորտի բարելավում, ազդեցություն այլ ոլորտների վրա և այլն):

Ծրագրերը պետք է արտացոլված լինեն կամ ընդունման պահին արտացոլվեն համայնքների ՏԱՊ-երում՝ համայնքի առաջնահերթություններին համահունչ լինելու նպատակով[3]:

---

[1] Միավորումները (կոնսորցիումները) կարող են ներկայացված լինել՝ ՏԻՄ-մասնավոր հատված և/կամ Հասարակական-համայնքային կազմակերպություններ, որոնք դրամաշնորհներին են դիմելու ՏԻՄ-երի միջոցով:

[2] «ԳՄՀԸ դրամաշնորհ համայնքին» համայնքներին ուղղակի աջակցության ԳՄՀԸ գործիք է, որի մանրամասները կներկայացվեն մրցույթում հաղթած ՏԻՄ-երին:

[3] Պլանավորման սխեմայի համաձայն, ծրագրային հայտերով նախատեսված գործողությունները պետք է պատշաճ ժամանակին և կերպով նաև արտացոլված լինեն համայնքային բյուջեներում, այդ թվում՝ ծրագրային բյուջեներում:

Ծրագրային հայտերը կարող են մշակվել՝

- Համայնքապետարանի կողմից

- Մեկից ավելի ՏԻՄ-երի համագործակցությամբ, եթե հայտավորվող ծրագիրը միջհամայնքային է

- Հանրային-մասնավոր կոնսորցիումների կողմից (ավագանու հավանությամբ)

- Բիզնես համայնքի կողմից

- Սկսնակների և միկրո-ձեռներեցների կողմից

Բոլոր դեպքերում ծրագրային հայտերը ենթակա են համայնքապետարանի հաստատմանը՝ թափանցիկ և հրապարակային եղանակով, իսկ գնահատումը և հաստատումը տեղի է ունենում չափանիշների հիման վրա, ավագանու բաց նիստում:

Հայտերի հաստատման գործընթացը

Համայնքի մակարդակում՝

- Մշակվում են համայնքապետարանի կողմից կամ համայնքապետարանի, ձեռներեցների և աջակից կառույցների համատեղ ջանքերով

- Վերբեռնվում են համայնքի կայքում նախքան ավագանու նիստը: Համայնքից եկած մեկնաբանություններին, հարցերին, դիտողություններին տրվում են պարզաբանումներ և բացատրություններ, անհրաժեշտության դեպքում՝ արվում փոփոխություններ

- Ներկայացվում են ավագանու նիստին և հաստատվում սահմանված կարգով

- Հաստատումից հետո համայնքի ղեկավարը և աշխատակազմի համապատասխան մասնագետը (մասնավորապես՝ տնտեսական զարգացման պատասխանատուն) ներկայացնում են ծրագիրը գնահատող հանձնաժողովին

Համայնքի ղեկավարը և ՀՏԶ պատասխանատուն կարող են համատեղ դիմել ԳՄՀԸ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրին՝ տեխնիկական, մասնագիտական խորհրդատվություն ստանալու հայտով: Դիմումը կարող է լինել ծրագրային հայտի կազմման հետ կապված հարցերով փորձագիտական աջակցություն ստանալու նպատակով:

Միջանկյալ օղակ

Ծրագրային հայտերի միջանկյալ օղակը ՏԿԵՆ-ի կողմից ստեղծված՝ Համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների աշխատանքային խումբն (ՀՏԶՊ ԱԽ) է: Խմբի անդամները անցել են համապատասխան վերապատրաստումներ: Ծրագրային հայտը ներկայացնող համայնքից ՀՏԶՊ ԱԽ-ի անդամը կարող է լինել գնահատողների կազմում:

- Միջանկյալ օղակում ներկայացված են ՀՏԶՊ ԱԽ անդամները, իսկ կազմը հաստատվում է սույն «Հայեցակարգագային դրույթները» հավանության արժանանալուց հետո

- Միջանկյալ օղակը մասնագիտական եզրակացություն է տալիս հայտի վերբերյալ և կատարում դրանց գնահատումը՝ ըստ չափանիշների

- Միջանկյալ օղակի գնահատումը հիմք է ՏԿԵՆ մակարդակում գնահատման համար

- Միջանկյալ օղակն իր աշխատանքը կատարում է հայտը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում

- Իր եզրակացությունները ներկայացնում է Գնահատող հանձնաժողովին

Գնահատող հանձնաժողով

Գնահատող հանձնաժողովը կազմված է ՏԿԵՆ (նախարարի տեղակալ և ՏԻ քաղաքականության և Տարածքային կառավարման, կապիտալ ծրագրերի և կոշտ թափոնների վարչությունների պետեր), ԾՀՀԳ (Ծրագրերի համակարգող), ԳՄՀԸ (Ծրագրի ղեկավար) and Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (Ինստիտուցիոնալ աջակցության վարչություն) ներկայացուցիչներից: ԾՀՀԳ և ԳՄՀԸ անդամները կարող են իրենց ներկայացուցիչներին ներկայացնել հայտերը գնահատելու համար:

- Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահում է ՏԿԵՆ նախարարի տեղակալը

- Գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՏԿԵՆ ՏԻ քաղաքականության վարչության պետն է

- Գնահատող հանձնաժողովը քննության է առնում համայնքի ծրագրային հայտը, ՀՏՀՊ ԱԽ-ի եզրակացությունը/գնահատականը և կատարում իր գնահատականը՝ այսպիսով ապահովելով «երկու քննության սկզբունքը» (նույն հայտը քննության է առնվում և գնահատվում երկու տարբեր կառույցների կողմից)

- Գնահատող հանձնաժողովի նիստերը կարող են լինել նաև առցանց: Առցանցի դեպքում ժողովները կազմակերպվում են MS TEAMS ծրագրով:

Առանձին նշում

ՀՏՀՊ ԱԽ-ի գնահատման արդյունքները ներկայացվում են Գնահատող հանձնաժողովին, որն էլ ընդունում է հայտի վերաբերյալ վերջնական որոշումը:

Հայտի կառուցվածքը

Ծրագրային հայտի առաջարկվող կառուցվածքը կազմված է հետևյալ հիմնական բաժիններից[4].

- Ծրագրի անվանում
- Հայտատու համայնք(-ներ)
- Ծրագրի նկարագիր (այդ թվում՝ նշում հայտի մշակման գործընթացի մասնակիցների մասին)
- Ծրագրի նպատակը և խնդիրները
- Իրականացման ժամկետ
- Իրականացման տարածք
- Ակնկալվող արդյունքներ (այդ թվում՝ ազդեցությունը համայնքի այլ ոլորտների վրա և միջանկյալ արդյունքներ, օր.՝ ժամանակավոր աշխատատեղեր ծրագրի իրականացման ընթացքում)
- Պատասխանատուներ (այդ թվում՝ համայնքապետարանից դուրս)
- Հայտատու համայնք(ներ)ի ՏԱՊ-(եր)ի համապատասխան հատվածը, որտեղ արտացոլված է ներկայացվող ծրագիրը
- Ավագանու նիստի արձանագրություն
- Հայտավորվող ֆինանսական միջոցներ
- Համաֆինանսավորման չափն ու ձևը
- Այլ լրացուցիչ տեղեկություններ և տվյալներ

[4] Բոլոր հնարավոր դեպքերում, նպատակահարմար է հիմնավորող փաստաթղթերի ներկայացումը որպես հայտին կից նյութեր (օր.՝ քաղվածքներ ՏԱՊ, բյուջե, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և այլն):

Հայտը կարող է ներառել նաև այլ, լրացուցիչ տեղեկատվություն, որը հայտատուն կարող է անհրաժեշտ համարել հայտի ամբողջականությունը պատշաճ ներկայացնելու համար: Պահանջվող տեղեկություններից կամ հիմնավորող փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում ՀՏԶՊ ԱԽ-ի և/կամ Հանձնաժողովի կողմից հայտը չի դիտարկվի:

Գնահատման չափանիշները

Հայտերը գնահատվում են 1000 բալանոց սանդղակով: Հայտը համարվում է հաստատված, եթե այն հավաքում է 600 և ավելի միավոր: Յուրաքանչյուր չափանիշին կցված է կշիռ, որոնց գումարն էլ կազմում է վերջնական գնահատման արժեքը: Գնահատման չափանիշների սանդղակը բաժանված է 1-4 գլխավոր խմբերի: Սույն փաստաթղթին կցված է միավորների հաշվարկման բանաձևերը պարունակող՝ «Դրամաշնորհային հայտերի գնահատման սանդղակ» Excel նյութը, որպես սույն փաստաթղթի անբաժանելի մաս:

Նախատեսված օրացույց

Գործողություն	Ժամկետ
ՀՏԶ ԱԽ նախապատրաստական նիստ	Նոյեմբերի 15
ՏԿԵՆ-ի հետ աշխատանքային հանդիպում	Նոյեմբերի 16
Գնահատման հանձնաժողովի մեկնարկային նիստ	Նոյեմբերի 18
Ծրագրային հայտերի ներկայացման վերջնաժամկետ	Դեկտեմբերի 10
ՀՏԶ ԱԽ կողմից գնահատում	Մինչև դեկտեմբերի 18
Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատում	Դեկտեմբերի 20
Պայմանագրեր և ծրագրերի իրականացման մեկնարկ	2022 թ. հունվարի 10-ից

ՀՀ միավորված համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված դրամաշնորհային հիմնադրամի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատման սանդղակ

Ծրագրի անվանում	
Հայտատու համայնք(-ներ)	
Հայտի ստացման ամսաթիվ	
Հայտի վերաբերյալ ՀՏԶՊ ԱԽ եզրակացության ներկայացման ամսաթիվ	

	Չափանիշներ	Կշիռ	Միավոր	Գնահատական
		%	≥10	*կշիռ x միավոր*
1.	**Ծրագրի նպատակները և խնդիրները**			
1.1	Ծրագրի նպատակի և խնդիրների հստակությունը	4		
1.2	Ծրագրի համապատասխանությունը համայնքի առաջնահերթություններին	6		
1.3	Թիրախային խմբի կարիքների ներկայացման հստակությունը	4		
1.4	Շահառուների շահերի ներկայացվածության հստակությունը	4		
1.5	Ծրագրի նպաստը համայնք(ներ)ի կայուն տնտեսական զարգացմանը	7		
1.6	Ծրագրի ազդեցությունը համայնքի էկոլոգիական վիճակի վրա	7		
1.7	Ծրագրի հաջողության դեպքում՝ ծրագրի և արդյունքների մասին տեղեկատվության տարածման առաջարկվող եղանակները	3		
Ընդհանուր 1.		**35**		
2.	**Ծրագրի ընդհանուր կառուցվածքը**			
2.1	Գործողությունների պլանի և օրացույցի իրատեսականությունը	4		
2.2	Ակնկալվող արդյունքների չափելիությունը	5		
2.3	Սպասվող արդյունքների չափման աղբյուրները	3		
2.4	Ռիսկերի (ներքին և արտաքին) գնահատումը	3		
2.5	Ծրագրի մշակման և իրականացման գործընթացում բիզնեսի, բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը	6		
2.6	Նորարարական, էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և լուծումներ	4		
Ընդհանուր 2.		**25**		
3.	**Ծրագրի կենսունակությունը**			
3.1	Ֆինանսական կենսունակություն	6		
3.2	Ինստիտուցիոնալ կենսունակություն (հատկապես կարևորվում են մասնավոր և հանրային հատվածների համագործակցության տվյալ և հնարավոր գալիք սխեմաների գործադրելիությունը)	6		
3.3	Ծրագրի կենսունակությունը գալիք 3-5 տարիների ընթացքում ապահովող միջոցառումներ	6		
3.4	Ծրագրի՝ ավելի քան մեկ բաղադրիչ ունենալու դեպքում՝ դրանցից մեկի չկատարման դեպքում մյուսների իրատեսականությունը (բաղադրիչների փոխկախվածություն)	2		
Ընդհանուր 3.		**20**		
4.	**Ծրագրի ֆինանսավորումը, բյուջեն և ծախս-արդյունավետությունը**			
4.1	ՏԻՄ-երի համաֆինանսավորման աստիճանը և որակը	6		
4.2	Բիզնեսի համաֆինանսավորման աստիճանն ու որակը/տեսակը	6		
4.3	Ծախսարդյունավետության գնահատում	8		
Ընդհանուր 4.		**20**		
Ընդամենը 1-4		**100**		
	Գնահատումը տոկոսով			**0**